ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2015 թվականի N 33-Ա

<<ՆՈՐԱՇԵՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի հունվարի 15-ի N41- Ա որոշման 1-ին կետի, ***որոշում եմ***՝

1. <<Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 4575000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցվում է 4574999 Հայաստանի Հանրապետության դրամով՝ հասարակ (սովորական) բաժնետոմսի անվանական արժեքի նվազեցման ճանապարհով: 305 հասարակ (սովորական) անվանական 15000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող 1 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի արժեքը նվազեցումից հետո կկազմի 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008թվականի մարտի 13-ի N23-Ա <<Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության կապիտալի չափը և կանոնադրության

փոփոխությունը հաստատելու մասին>> N23-Ա որոշմամբ հաստատված <<Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2. կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել <<Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մարտի 19

ք. Կապան